

UPPER CILICIA

1080-1375 Held by Armenians
 1375-1920 Semi-independent Armenian towns
 1920 France abandons mandate over Cilicia
 Armenians migrate to Lebanon and elsewhere

LOWER CILICIA

1098-1100 Byzantine
 1100-1104 Crusader
 1104-1107 Byzantine
 1107-1112 Crusader
 1112 Anazarpa captured by Armenians
 1135-1137 Partly held by Armenians
 1137-1145 Byzantine
 1145-1151. Armenian
 1152-1162. Byzantine
 1162 Partly Armenian
 1172 Mostly Armenian
 1182-1375 Armenian

ANTIOCH

1078-1085 Armenian (Philaretus)
 1098 Crusader
 1137 Byzantine
 1159 Byzantine
 1162-1194 Crusader
 1194 Armenian (temporary)
 1203 Armenian (temporary)
 1208 Armenian (temporary)
 1216 Armenian (two years)
 1253 Armenian (suzerainty)
 1258 Armenian (suzerainty)

PAUL BEDOUKIAN

ՍԱՅԱԹ - ՆՈՎԱՅԻ ԾԱԾԿԱԳԻՐԵՐԸ

Աշուղական բանարուեստն աչքի է ընկնում տաղաչափական ու կառուցուածքային բարդ ու բազմազան ձեւերով եւ հնարանքներով: Յատկապէս մրցավիճային նպատակով աշուղները յաճախ են դիմել գաղտնադրութիւններին, որոնք արտայայտուել են հիմնականում հանելուկ-մուհամմաներով, բառախաղ-թեջնիաներով եւ ծածկագրերով (կրիպտոգրամա): Սայաթ-նովա, որ ամենամեծ աշուղն էր բանաստեղծների մէջ եւ ամենամեծ բանաստեղծը՝ աշուղների մէջ, հմտորէն տիրապետել է այդ բանարուեստի բոլոր նրբութիւններին, ընդամին նաեւ գաղտնագրութեան եղանակներին, տալով դրա մի քանի կատարեալ նմուշներ: Այդպիսի է, օրինակ, «Յիս կանչում իմ լալանին» սկսուածքով հայերէն ուղղափառ-թափառ բարդ կառուցուածքով խաղը, որի բայաթի տներում տարբեր իմաստներով կրկնուում են բառախաղ-յանգ կազմող չորսական համահունչ (հոմոնիմ) բառեր ու բառաձեւեր: Իերենք այդ խաղի առաջին տունը.

Յիս կանչում իմ լալանին,
 Բաղեխանեն լալանին.
 Վայ թէ հասրաթետ միունիմ,
 Բըբուլ լիզուա լալանին.
 Դոստիրըս հիու կանգնին,
 Յաղիրըն գան, լալանին:

Առաջին տողի լալանին, ինչպէս ժամանակին նկատել է հմուտ սայաթ-նովագէտ Գէորգ Ասատուր, նշանակում է լալ (սուտակ) Աննային: Երկրորդ լալանին-ի իմաստն է՝ լալ (սուտակ) են հանում (Բաղեխանից սուտակ են հանում, ստանում): Երրորդ լալանին նշանակում է համրացնեն (լալ դարձնեն), իսկ չորրորդը՝ Լաց լինեն (լան): Նոյն խաղի մէջ կարգում ենք նաեւ այսպիսի տողեր.

Նու ու Այիբ գայ անին . . .
 Սե ու Այիբ մաս անին:

Առաջին տողն, ըստ Մ. Հասրաթեանի, կարելի է կարդալ նազ Աննային, կամ նազանիին, ինչպէս նաեւ Նովային) ու Աննային) կոր-

ծանում են (գայ են անում): Միւս տողի իմաստըն է՝ Ս(այաթին) ու Ա(ննային) մասնանում, բաժանում են:

Այսպիսի գաղտնագիր-բառախաղեր Սայաթ-նովա գրել է թէ հայերէն եւ թէ վրացերէն ու աղբրեջաներէն, դրանցից մի քանիսի մէջ դարձեալ գաղտնագրելով իր սիրած կնոջ՝ Աննա Բատոնիչվիլու (վրաց Թեյմուրազ արքայի դստեր, Հերակլի քոյր) անունը:

Իր վրացերէն սիրերգերից մէկը երգիչն աւարտել է հետեւեալ տողով.

Տախտի Թոռզի Ինդիս մեհիս անաշենիա:

Տողի իմաստն է՝ Սիրամարգեայ գահը (Թովուզի թախտը) Հնդկաստանի թագաւորի շինածն է: Սակայն անաշենիա բառը, ըստ Գէորգ Ասատուրի, կարելի է տրոհել անա շենիա ձեւով, ըստ որի այն կը նշանակի՝ Աննա քոյրն է:

Աննա (Անա) անունն է գաղտնագրուած նաեւ «Բեզ հետ նրա համար եմ խօսում» սկզբուածքով վրացերէն սիրերգի վերջում, ուր ասուած է.

Սախելի մաքվս «Մանի», «Թենի»,
 «Վինիս» բոլոս «Անի» վնախե:

Այսինքն՝

Անունս է «Ս», «Թ»,
 «Վ»-ի վերջում «Ա»-ին տեսայ:

Երգիչն այստեղ ծածկագրել է իր աշուղական անունը, նշելով Սայաթ-ի առաջին եւ վերջին եւ Նովա-ի վերջին երկու տառերը: Միաժամանակ նա ծածկագրաբար ասել է, որ այդ օրը տեսել է Անի-Աննային: Մեր երգչի նպատակն է եղել իրար կողքի դնել իր եւ սիրուհու անունները, ինչպէս երկու անգամ արել է վերոյիշեալ «Յիս կանչում իմ լալանին» հայերէն խաղում: Պ. Սեւակի համոզմամբ էլ, այս տողի «Անի»-ն եւս երգչի «սիրածի անունն է անպայման»: Որ «Անի-ն տեսայ» իսկապէս նշանակում է՝ Ան-

նային տեսայ, երեւում է նաեւ խաղի բովանդակութիւնն: Նրա առաջին չորս տները վերջին տողերում երգիչը նշել է, որ այդ օրը տեսել է իր սիրածին: Հինգերորդ տան վերջին տողում էլ համապատասխանաբար պիտի նշեր եւ նշել է, որ տեսել է իր սիրուհուն, այս անգամ արդէն տալով նրա անունը: Բայց քանի որ մեծագործը եւ անուանի է սիրուհին, նրա անունը տուել է որոշ գաղտնագրութեամբ: Յատկանշական է, որ նոյն այս խաղի մէջ երգիչն ակնարկել է իր եւ սիրուհու հասակակից լինելը («Թէ իրօք իմ հասակին ես, մի բան, որ նա ուղղակիօրէն ասել է իր մի հայերէն սիրերգում («Ինձ ու իմ սիրեկան եարին մե տարի բերած գիղենաք»): Եւ քանի որ, ինչպէս ցոյց է տուել Պ. Սեւակ, արքայաբոյր Աննա ծնունդ է 1722-ին, ուստի եւ առաւել որոշակի է դառնում թէ երգչի ծննդեան թուականը եւ թէ նրա սիրած կնոջ անձնագրութիւնը:

Սայաթ-Նովայի աղբթաններէն բառախաղ-թեղնիսներէց մէկն էլ կառուցուած է յաղաճաբառաձեւի վրայ: Ինչպէս նկատել է Պ. Սեւակ, «Յանգաւորուած այս բառերի մէջ կայ աւելին, քան ծածկագրուած Աննա (Աննա) անունը. այդտեղ կայ նաեւ «անուն» բառը (աղբթաններէն «ապ»): Ուրեմն չորս քառյականոց մի թաղի մէջ, ծածկելով յանգերի խաղաղութեան տակ, Սայաթ-Նովա հինգ անգամ ոչ միայն տալիս է իր սիրածի անունը, այլեւ նոյնքան անգամ պարզապէս ճշում է. «Անունն Աննա է» («Ադ Աննա»):

Աշուղական գաղտնագրութեան մի ձեւ է նաեւ դարահեղան. խաղի այն ձեւը, որտեղ հիմնական յանգ կազմող բառերը գրուած են տառանուններով: Այսպէս օրինակ, «Սիրտս ելաւ քաբաք» ասելու փոխարէն ասուած է՝ «Սիրտս ելաւ քե ու այբ երկու բեն»: Հայերէն դարահեղաններում տառանունները տրուած են ըստ հայկական, իսկ աղբթաններէն խաղերում՝ ըստ արաբական այբուբենի:

Յատկանշական է, որ իր մի հայերէն խաղի մէջ Սայաթ-Նովա, ինչպէս ցոյց է տուել Մ. Աղայեան, դարահեղանի ձեւով դարձեալ գաղտնագրել է իր մեծագործ սիրուհու անունը.

Նոյին գեմին ազատից,
Ինձ՝ Այիբն ու նու այիբ:

Այսինքն՝ Նոյին նաւը (տապանը) ազատեց,
Ինձ՝ Աննան (Աննա):

Սայաթ-Նովայի մի քանի խաղերում տարբեր ձեւերով եւ սկզբունքներով ծածկագրուած են նաեւ որոշ թուեր ու թուականներ: Նման ծածկագրեր կան նրա դարահեղանաղբերի վերջին տողերում: Երգչի ինքնագիր երգարանում՝ Դավթարում, գտնուած ենք այդպիսի երեք աղբթաններէն խաղեր: Այստեղ երգիչը թուերը ներկայացրել է արաբական այբուբենի տառերով, նկատի ունենալով կամ նրանց թուարժեքները կամ հերթական համարները:

Առաջին աղբթաններէն դարահեղան, որ գտնուած է Դավթարի 87-րդ էջում («Համաշա աշուղլար դահրի բեիլադուր»), աւարտուած է հետեւեալ տողով.

Յաշումիդի յե ու ալիփ իբի քափ:

Սա բառացի նշանակում է՝ արցունք թափենք, մեկնաբանուած է նաեւ՝ մեր տարեթիւը յե ու ալիփ երկու քափ է: Ծածկագիր պարունակող այդ հատուածից ստանում ենք «Թաքաք» բառը: Այստեղ, սակայն, անհրաժեշտ է նշել հետեւեալը: Քանի որ Սայաթ-Նովա Դավթարում աղբթաններէն երգերի դիւանը կազմելիս, ինչպէս նաեւ ծածկագրեր ստեղծելիս առաջնորդուել է արաբական այբուբենով, ուստի եւ նրա աղբթաններէն խաղերի ծածկագրերը պէտք է ընթացիկ բաղաձայնագրային համակարգով, այսինքն՝ առանց ձայնաւորների: Հետեւաբար խնդրոյ առարկայ ծածկագիրը պէտք է արտայայտել ոչ թէ թաքաք, այլ թքք ձեւով: Արաբական այբուբենում ք-ն (Tā) ունի 400 թուական արժէք, ք-ն (քափը)՝ 20: Ըստ այդմ, թքք ծածկագրից ստացուած է 440 թիւը: Նշենք, որ երգիչը Դավթարում ինչպէս բացայայտ, այնպէս էլ ծածկագիր թուագրումները կատարել է վրաց փոքր քրոնիկոնով: 440-ը վրաց փոքր քրոնիկոնով հաշուած՝ տալիս է փրկչական 1752-ը (440 + 1312): Այդ թուականին է գրուած տուեալ աղբթաններէն դարահեղան (Դավթարում այն ուղղակիօրէն թուագրուած է):

Աղբթաններէն երկրորդ դարահեղան («Մաղրուբդան քի՞մ չըդտի») գտնուած է Դավթարի 98-րդ էջում: Ի դէպ, սա նաեւ ավալախըր է, այսինքն՝ պատկանում է աշուղական երգի այն տեսակին, որի մէջ բոլոր տողերը սկսուած եւ աւարտուած են միեւնոյն տառով

(տուեալ դէպքում մ տառով): Ահա այդ կրկնա-կիրօրէն բարդ խաղի վերջին տողը.

Մագար յե ալիփ ըե, բե ալիփ զեու ու միմ:

Այս տողի վերծանութիւնից ստացուած է՝ միթէ՞, ու Սատուած ես կը սպառուեմ իմաստը: Այստեղ էլ ծածկագիրն ամփոփուած է «ալիփ զե ու միմ» հատուածի մէջ, որ կազմում է «ագամ» բառը: Եթէ նախորդ դարահեղանի ծածկագիրը տարբեր ընթացքով ներկայացրել է մի քանի անյաշող վերծանութիւններ, ապա այս ծածկագիրը վերծանուած է առաջին անգամ: Այս դէպքում էլ ծածկագիրը պէտք է կարգաւ բաղաձայնային համակարգով եւ ըստ այդմ ազամի փոխարէն կ'ունենենք զմ: Զ-ն (Sā) արաբական այբուբենի 11-րդ տառն է, իսկ մ-ն (միմ)՝ 24-րդ: Իրանց գումարից ստանում ենք 35: Այդ տարի-թիւն է եղել Սայաթ-Նովա տուեալ աղբթաններէն խաղը գրելիս: Այս խաղն էլ Ֆ Դավթարում թուագրուած է, բայց այս ծածկագրի վերծանութեամբ կարող ենք ասել, որ այն յօրինուած է 1757 թուականին:

Երրորդ դարահեղան խաղով, որ գտնուած է 101-րդ էջում, առհասարակ աւարտուած է Դավթարի աղբթաններէն երգերի դիւանը: Այս Դավթարի («Ալիփ-Ալահի սեւարսան») բացի դա՝ խաղը («Ալիփ-Ալահի սեւարսան») բացի դահեղան լինելուց նաեւ այբբենաշարալիփլամաբան է, այսինքն բանաստեղծութեան այն տեսակը, է, որի տողերն ու որոշ կիսատողեր սկսուած են այբուբենի (տուեալ դէպքում արաբական) յաջորդական տառերով: Թաղը իր իսկ՝ երգչի ծանուցմամբ, գրուած է 1755 թուականի մարտի 4-ին: Այն աւարտուած է այսպիսի տողերով.

Հեյդան Սայաթ-Նովա Վովա վարինդի,
Լամ ու ալիփ Լամ յե ու ալիփ իբի ըե (լալ յարար):

Սա նշանակում է՝ Սայաթ-Նովա, Հեյ-ից հասար վով-ին, Լալը (փոխաբերաբար՝ երգը) կը ստեղծուի: Այս տողերից առաջինում երգիչը ծածկագրել է իր տարեթիւ տուեալ խաղը գրելու ժամանակ, իսկ երկրորդում՝ իր ծննդեան թուականը: Առաջին ծածկագրի վրայ առաջին անգամ ուշադրութիւնը, սակայն, յաջողութեամբ որի վերծանութիւնը, սակայն, չէ կատարել: Լրացնելով ու ճշտելով Հասարաթ-ի պատկուել: Լրացնելով էլ այս ծածկագիրը: Եւ նախ, Պ. Սեւակ Լուծել է այս ծածկագիրը: Ըստ նրա, Հեյը արաբական այբուբենի 6-րդ տառն է, իսկ Վովը՝ 27-րդ: Իրանց գումարից ստանում է, իսկ Վովը՝

ստացուած է 33. այդ տարիքին է եղել Սայաթ-Նովա տուեալ խաղը գրելիս, այն է՝ 1755-ին: Ըստ այդմ, երգիչը ծնունդ է 1755 - 33 = 1722-ին (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդէս», 1966 No. 2, էջ 95): Յետագայում, սակայն, Պ. Սեւակ հրատարուած է իր այս համոզիչ ու ճշգրիտ վերծանութիւնից եւ իր «Սայաթ-Նովա» մենագրութեան մէջ (Ե., 1969, էջ 107) նշում, թէ այդտեղ ոչ մի ծածկագրութիւն կայ: «Ես հաշուի չեմ առել, - գրում է նա -, որ արաբերէնն ունի երկու «Հ» տառ, մէկը (xā) իսկապէս էլ այբուբենի 6-րդ տառն է, իսկ միւսը (xaā)՝ 26-րդը: Եթէ Սայաթ-Նովա խօսած լինէր այբուբենի 6-րդ տառի մասին՝ մենք իսկապէս էլ գործ կ'ունենայինք ծածկագրութեան հետ, որովհետեւ պիտի ջանայինք հասկանալ, թէ նա ինչո՞ւ է 6-րդ տառը կապուած 27-րդ տառի հետ: Բայց Սայաթ-Նովա նկատի է ունեցել արաբերէնի ոչ թէ առաջին «Հ»-ն, այլ երկրորդ «Հ»-ն: Այս դէպքում արդէն ծածկագրութեան բան չկայ, այս երկրորդ «Հ»-ն այբուբենի 26-րդ տառն է, որին յաջորդում է «Վ»-ն (27-րդ տառը): Եւ Սայաթ-Նովա «Հ»-ից հասայ «Վ»-ին ասելով՝ ասում է հէնց այն, ինչ ասուած է, այսինքն՝ որ նա պարզ թուարկել է իրար յաջորդող երկու տառ»:

Բոլորովին ի գուր էր, սակայն, Պ. Սեւակ հրատարուած ծածկագրի իր աներկբայելի վերծանութիւնից եւ ծածկագրուած տողում տեսնում միայն տառերի պարզ թուարկում: Նա պարզապէս այստեղ հաշուի չի առել մի հանգամանք, որ Սայաթ-Նովայի ծածկագրերը հիմնականում երկիմաստ են, այսինքն՝ ունեն ուղղակի եւ ծածկագրուած իմաստներ: Պ. Սեւակ գտել էր փաստօրէն սոյն ծածկագրի թէ ուղղակի եւ թէ ծածկագրուած իմաստները: Հետաքրքրական է, որ նա նախ գտել էր ծածկագրուած իմաստը, յետոյ միայն՝ ուղղակի իմաստը եւ վերջինս գտնելուց յետոյ բացատրել է առաջինը:

«Սայաթ-Նովա, Հեյ-ից հասար Վով-ին» տողի ուղղակի իմաստն այն է, ինչ ասուած է՝ Սայաթ-Նովա, և տառից հասար Վ տառին: Այստեղ երգիչը նկատի ունենալով արաբական այբուբենի 2-րդ Հ-ն՝ 26-րդ տառը, այբբենաշարալիփլամայի պահանջով ընդամենը թուարկել է երկու իրար յաջորդող տառեր՝ 26-րդ Հ-ն եւ 27-րդ Վ-ն, որ իսկապէս ծածկագիր է: Այսպէս նա հայերէն «Այլը Աստուած սիրիս»

հայկական այբուբենի տառերով ծածկագրորեն հաղորդում է նրա գրութեան թուականը:

Հասա Ռա է, Հասա Ձե, Հասա Սե:

Այսինքն՝ հասած ՌէՋՍ թուականին: Ոնալի նախավերջին տողում էլ երգիչը ասել է:

Սայաթ-Նովա, տարիտ էլավ քարասուն»:

Ծածկագրի բոլոր վերծանողները (իսկ նրանց թիվը բառական շատ է) այս տողը հասկացել են ուղղակի իմաստով՝ Սայաթ-Նովա, տարիք դարձա քարասուն, այսինքն՝ քարասուն տարեկան դարձար: Սակայն նրանք հաշուի չեն առել այն հանգամանքը, որ գործ ունեն բարդ թեղիս-բառախաղի հետ: Իրականում այս տողը յաջորդի հետ միասին («Դու մահի հիդ, մահն քիդ հիդ հասասե») նշանակում է՝ Սայաթ-Նովա, լրացավ քարասուն տարին, ինչ դու մահին, մահն էլ քեզ հետամուտ է: Ոնալի ծածկագրի վերծանութեամբ պարզ է դառնում, թե ինչ է այստեղ ակնարկում երգիչը:

Գտնելով, որ այս խաղը հասել է թերատ ու աղաւաղուած ձևով, ծածկագրի բոլոր վերծանողները ուզածի պէս փոփոխել են այն, ստանալու համար իրենց անհրաժեշտ թուականը: Եւ այսպէս ՌէՋՍ-ն դարձել է ԹՉԾԷ, ԱԹՋՍ, ԹԾՋ, ԹԷՋՍ, ԹՉԾԳ, ԹԵՃԿՁ եւ այլն: Մեր համոզմամբ խաղը եւ յատկապէս նրա ծածկագիրը թերատ եւ աղաւաղուած չէ: Լինելով Սայաթ-Նովա-Ստեփանոսի վերջին գրական աշխատանքներից մէկը, այն թերեւս Օհանի ձեռքն է անցել գրաւոր վիճակում: Բացի այդ, աշուղական արուեստին քաջածանօթ Օհան այնքան միամիտ չէր, որ չտեսնէր խաղի մէջ եղած ծածկագիր թուականը ու չզգայով նրա կարեւորութիւնը, արտագրէր այնքան անփութօրէն, որ ԱԹՋՍ-ի կամ ԹԵՃԿՁ-ի փոխարէն գրէր ԹԷՋՍ (այն էլ՝ տառանուններով): Այնպէս որ ծածկագիրը պահպանուել է անաղարտ ձևով եւ պէտք է վերծանել այն առանց կամայական փոփոխութիւնների ենթարկելու: Ճիշտ է, այն գրուած է վրացական տառագարձութեամբ, բայց քանի որ ծածկագրում տառերը բերուած են իրենց այբբենական անուններով, ուստի հայերէն տառագարձելիս ոչ մի դժուարութեան չենք հանդիպում: Ռ-ն չի կարելի չըփոխել Բ-ի հետ, քանի որ բնագրում որոշակիօրէն գրուած է Ռա եւ ոչ թէ Բե, է-ն չի կարելի Ե տառադարձել, որովհետեւ բնագրում որոշա-

կիօրէն գրուած է է եւ ոչ թէ Եչ, Ջ եւ Ս տառերն էլ գրուած են իրենց անուններով՝ Ձե եւ Սե: Ճիշտ է նաեւ, որ տողում մէկ վանկ պակասում է, բայց տուեալ դէպքում դա աղաւաղման արդիւնք չէ, քանի որ նախ՝ գործ ունենք ծածկագրուած տողի հետ եւ երկրորդ՝ Սայաթ-Նովայի ինքնագիր Դավթարում էլ կան շատ տողեր, որոնք մէկ վանկով պակաս (կամ աւելի) են միւսներէից, բայց աղաւաղուած չեն եւ կարիք էլ չկայ խմբագրել այդ տողը:

Մ. Հասարթեանի կարծիքով այս ծածկագրի բազմաթիւ վերծանումներից մէկը «ճշմարիտ անվիճելի կը դառնայ ժամանակին»: Որպէսզի այդ վերծանումը «ճշմարիտ ու անվիճելի դառնայ», պէտք է այն կատարել առանց ծածկագիրը խաթարելու, օգտագործելով նոյն այս խաղի ընձեռած բանալիները, ինչպէս Պ. Սեւակ է ասում. «Սայաթ-Նովային հասկանալ Սայաթ-Նովայի միջոցով»: Այդպէս էլ, ահա, մենք ձգտել ենք վերծանել այդ ծածկագիրը:

Կարդանք խաղի հէնց առաջին տողը, որ ծածկագրի առաջին բանալին է.

Այիբբիմն կարթացիլ իմ դասեդաս:

Այսինքն՝ այբուբենը կարդացել եմ դասեդաս: Դասեդաս նշանակում է շարքերով, դասերով, սիւն առ սիւն: Այդպիսի դասդասում կատարում են տառերի թուական արժէքները ըստ միաւորների, տասնաւորների, հարիւրաւորների ու հազարաւորների որոշելու համար: Կարդանք այբուբենը դասեդաս

Ա	Ժ	Ճ	Դ
Բ	Ի	Մ	Ս
Գ	Լ	Յ	Վ
Դ	Խ	Ն	Տ
Ե	Ծ	Շ	Ր
Զ	Կ	Ո	Յ
Է	Հ	Չ	Ի
Ը	Ձ	Պ	Փ
Թ	Ղ	Ջ	Գ

Ստացւում է, ուրեմն, չորս սիւն, ուշագրաւ է, որ վերջին տան առաջին տողում, որ նոյնպէս բանալիի արժէք ունի, երգիչն ասում է՝ «Հազար տարին մարթու աչկին քառասուն»: Սա բաց է իր ուղղակի իմաստից, նշանակում է նաեւ հազար տարին (1-ից մինչեւ 1000 կամ Ա-ից մինչեւ Ռ) երեւում է չորս սիւնով (քառասուն):

Ուրեմն այբուբենը պէտք է կարդալ քառասուն դասերով կամ չորս սիւնակով, ինչպէս եւ վերեւում կարդացինք:

Այժմ կարդանք խաղի երկրորդ տան առաջին տողը, որ ծածկագրի միւս կարեւոր բանալին է.

Հազար տարին մարթու աչկին թաքավուր:

Այս տողը եւս կարելի է հասկանալ երկու իմաստով. ա) հազար տարին մարդու աչքին մէկ օր (թաք ավուր) է երեւում եւ բ) հազար տարին (կամ Ա-ից մինչեւ Ռ) տես որպէս թաքավուր, այսինքն՝ միաւոր: Հէնց այս է բանալին: Այբուբենը կարդալով քառասուն դասերով, երգիչը դասերի մէջ ընդգրկուած տառերը յաջորդաբար հաշուել է միաւորներով: Ըրը յաջորդաբար հաշուել է միւսը շար՝ Այսինքն՝ Ռ-ն ոչ թէ 1000 է, այլ՝ 1, որպէս շար՝ նաեւ միւս դասերում: Այժմ այբուբենը կարդանք քառասուն դասերով եւ միաւորների արդանք քառասուն դասերով եւ միաւորների արդէքով, որ եւ կը լինի ծածկագրի վերջնական բանալին.

1 Ա	1 Ժ	1 Ճ	1 Դ
2 Բ	2 Ի	2 Մ	2 Ս
3 Գ	3 Լ	3 Յ	3 Վ
4 Դ	4 Խ	4 Ն	4 Տ
5 Ե	5 Ծ	5 Շ	5 Ր
6 Զ	6 Կ	6 Ո	6 Յ
7 Է	7 Հ	7 Չ	7 Ի
8 Ը	8 Ձ	8 Պ	8 Փ
9 Թ	9 Ղ	9 Ջ	9 Գ

Այս բանալիով կարդանք ՋՍ ծածկագիրը. Ռ-1, է-7, Ձ-9, Ս-2: Թուերը դնենք տառերի տեղը եւ դրանց համադրութեամբ կը ստանանք 1792 թուականը: Այս թուականին է գրուել, ահա, ինչպէս նախորդ, այնպէս էլ այս խաղը, երբ երգիչը բոլորել է իր եօթանասուն տարին:

Վերեւում նշեցինք, որ խաղի վերջին երկու տողում բանաստեղծն ասել է. «Սայաթ-Նովա, լրացաւ քառասուն տարին, ինչ դու մահին, մահն էլ քեզ հետամուտ է: Եւ սա ասուած է, ուրեմն, 1792 թուականին: Դրանից հանելով 40, ստանում ենք 1752 թուականը: Ճիշտ այդ ժամանակ, ինչպէս յայտնի է, սկսուել է երգչի սիրոյ մեծ ողբերգութիւնը: Եւ քառասուն տարի ապրած այդ ողբերգութեան մասին է ակնարկում արդէն ծերունի կուսակիցն բանաստեղծը:

Այսպէս ուրեմն, Սայաթ-Նովայի գաղտնագրերի վերծանութեամբ լուսաբանուած են երգչի կենսագրութեան որոշ մուկ էջերը, ճշտուած է նրա ծննդեան թուականը (1722), հաստատուած է այն աւանդութիւնը, որ բանաստեղծի ճակատագրական սիրոյ առարկան եղել է արքայադուստր Աննան: Պարզուած են երգչի որոշ խաղերի գրութեան թուականները, եւ ըստ այրմ իմանում ենք, որ մեծ սիրերգու շարունակել է բանաստեղծել թէ՛ իր քահանայութեան եւ թէ՛ կուսակիցութեան տարիներին, ընդհուպ մինչեւ իր եղբրական մահը:

ՀԵՆՐԻԿ ԲԱՆՁԻՆԵԱՆ